ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2085-Ա « 10 » հունիսի 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.107 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ԱԲԵԼՅԱՆԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲԵՌԼԻՆ ԵՎ ՄԻՔԼԵՆԲՈՒՐԳ ՆԱՀԱՆԳԻ ՌՈՍՏՈԿ ԵՎ ՇՎԵՐԻՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի և «Բիզնես և կրթություն» ասոցիացիայի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում, ինչպես նաև Գերմանիայի Մեկլենբուրգ-Ֆորպոմերանիա Դաշնային տարածաշրջանային էկոնոմիկայի Ուսումնական Կենտրոնի հետ համատեղ փորձի փոխանակման, վերապատրաստումների և մասնագիտական կողմնորոշման գերմանական մոդելի ծանոթացման ծրագրին մասնակցելու նպատակով և ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով.

1.«Երևանի հ.107 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Աբելյանին՝ 2024 թվականի հունիսի 9-ից 18-ը ներառյալ, գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության մայրաքաղաք Բեռլին և Միքլենբուրգ նահանգի Ռոստոկ և Շվերին քաղաքներ:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3.«Երևանի հ.107 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Աբելյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունները վերապահել նույն դպրոցի տնօրենի տեղակալ Նելլի Փիցխելաուրիին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ